ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

WATER COMMITTEE
CHAIRPERSON

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 909, ֆաքս՝ (374 10) 540 613
Էլ.փոստ scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan0010, Armenia
Tel.: (374 10) 540 909, fax: (374 10) 540 613
E-mail:scws@scws.am

<<___>> _____ 2021թ. N ----------

Ձեր _____ 2021թ. N ----------

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
Էլ. հասցե՝ foi@foi.am
Հեռախոս՝ +37491407836

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2021 թվականի մարտի 11-ի N 347-33 և 2021 թվականի ապրիլի 14-ի N 347-38 գրությունների, ներկայացվում է պահանջվող տեղեկատվությունը՝ ըստ կետերի.

1-ին կետի վերաբերյալ՝ կից ներկայացվում է 2017թ. հունվարի 1-ի դրությամբ անվճար ջրամատակարարում ունեցող գույքագրված ցայտաղբյուրների ցանկը, որը համաձայնեցված է բոլոր համայնքների ղեկավարների հետ,

2-րդ կետի վերաբերյալ՝ սկսած 2018 թվականից համայնքների կողմից իրականացվում են մեծածավալ սուբվենցիոն ծրագրեր, որոնք ֆինանսավորվում են նաև ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ ծրագրերի նախաձեռնող կողմ են հանդիսանում համայնքները, հետևաբար հնարավոր չէ հստակ ծրագրավորել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի զարգացմանն ուղղվող ներդրումների ժամանակացույցը: Հաշվի առնելով վերոգրյալը, գործնականում անհնարին է հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) պայմանագրով սահմանված ցուցանիշների և ներդրումների փոխկապակցվածության ապահովումը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀԿՑ-ների բազիսային տարվա արժեքները, որոնք հաստատվել են անկախ տեխնիկական աուդիտորի (ԱՏԱ) կողմից, հանդիսանում են այն նախնական շեմը, որին համապատասխան Վարձակալը պետք է իր գործունեության ընթացքում ապահովի յուրաքանչյուր տարվա համապատասխան ՀԿՑ-ի արժեքի բարելավումը: Համաձայն 2020 թվականի տարեկան հաշվետվության տվյալների, Վարձակալը հիմնականում կարողացել է ապահովել նախորդ տարվա համեմատ ՀԿՑ-ների նորմալ գործող ստանդարտների (ՆԳՍ)՝ պայմանագրով սահմանված արժեքները:

3-րդ և 4-րդ կետերի վերաբերյալ՝ տեղեկացնում եմ, որ ներկայում ընթացքի մեջ են գտնվում ՀՀ կառավարության, Գերմանիայի KFW Բանկի, Եվրոպական Ներդրումային բանկի և

Եվրամիություն կողմից ֆինանսավորվող <<Համայնքային ենթակառուցվածքների զարգացման II ծրագիր, փուլ 3>> Ծրագրով նախատեսված շուրջ **81** միլիոն եվրո արժողությամբ ՀՀ 6 մարզերի (Ծիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի) 11 քաղաքային և 37 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերակառուցման աշխատանքները: Ծրագրի նպատակն է՝ բարելավել համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը, ինչը ենթադրում է հնամաշ խողովակաշարերի փոխարինում, ջրընդունիչների, օրվա կարգավորիչ ջրամբարների և պոմպակայանների վերակառուցում, ջրաչափերի տեղադրում, շուրջօրյա ջրամատակարարման ապահովում և այլն:

Ծահառու բնակչության թվաքանակը կազմում է ավելի քան 100,000 մարդ: Ծրագրի ամբողջ ընթացքում նախատեսվում է 66 կմ ջրատար խողովակաշարի մոնտաժում, 20 ջրընդունիչների, օրվա կարգավորիչ ջրամբարների և պոմպակայանի վերակառուցում, 490 կմ բաշխիչ ցանցի կառուցում և 180 կմ երկարությամբ ջրագծերի տնային միացումների մոնտաժում: Ջրաչափական հորերի թիվը մոտ 18000 է:

Այս փուլում հատկապես ակտիվ աշխատանքներ են տարվում Գյումրի, Հայկավան, Բայանդուր, Վանաձոր, Լեռնապատ և Գուգարք բնակավայրերում:

Ընթացքի մեջ են գտնվում նաև «Երևանի ջրամատակարարման բարելավման» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի մի շարք թաղամասերի բաշխիչ ցանցերի փոխարինման և անհատական ջրաչափական հորերի կառուցման աշխատանքները, որոնց ավարտը նախանշված է 2022թ.: Այս Ծրագրի խնայողությունների հաշվին նախատեսվում է մոտ **2** մլրդ ՀՀ դրամ արժեքով խոշորածավալ ներդրումային ծրագիր իրականացնել Երևան քաղաքի վարչական տարածում գտնվող Նոր Խարբերդ այգեգործական տարածքում՝ ուղղված նոր բաշխիչ ցանցի կառուցմանը:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող ՀՀ Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերի շուրջ 50 բնակավայրերում ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքներ են իրականացվում նաև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ավելի քան **8** մլրդ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

5-րդ կետի վերաբերյալ՝ Ձեզ տեղեկատվություն տրամադրվել է: Մոնիտորինգի վերսկսման հստակ ժամկետների վերաբերյալ չենք կարող նշել՝ պայմանավորված նշված հարցի հրատապության բացակայությամբ:

Առդիր՝ 1 արխիվացված ֆայլ:

Recoverable Signature

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա. Սերգոյան
Ա. Սիմոնյան
54-72-84